ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/24
«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ (ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՍՆՆԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ, ԾԽԱԽՈՏԻ, ԱԼԿՈՀՈԼԻ, ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼԸ) ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

2024 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Զարա Ասլանյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (Հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Վերոնիկա Խորասանյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ),
Անուշ Մխիթարյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի անդամ),
Նարեկ Առաքելյան՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության մասնագետ (Հանձնաժողովի անդամ),

Մարիանա Մինասյան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր.

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում:
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Զ. Ասլանյանը հայտարարեց նիստը բացված:

1. **Օրակարգի 1-ին հարց**

Հանձնաժողովի կողմից հայտերի բացումը տեղի ունեցավ 2024 թվականի փետրվարի 5-ին ժամը՝ 11.00-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հանձնաժողովն արձանագրեց, որ հանձնաժողովի Բացման Աշխատակազմը սահմանված կարգով www.armeps.am էլեկտրոնային համակարգով իրականացրել է հայտերի բացումն ու ներկայացումը Գնահատման Աշխատակազմին: Հայտերի բացման ընթացքում հայտնի է դարձել, որ մրցույթին ներկայացվել է 11 հայտ:

Հանձնաժողովը նկատեց, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵ ԴԱՐԱՇՐՋԱՆ» կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերից հնարավոր է ներբեռնել միայն «առնվազն 1 նմանատիպ ծրագրի կազմակերպման և անցկացման փորձառությունը հավաստող պայմանագրի պատճեն» բաժնում կցված փաթեթը, իսկ «Փոփոխություն հանուն զարգացման» ՀԿ կողմից ներկայացված փաստաթղթերից և ոչ մեկը հնարավոր չէ ներբեռնել: Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ 2 կազմակերպությունների կողմից Համակարգում երևում են կցված փաստաթղթեր:

Ելնելով նշված տեխնիկական խնդիրների բնույթից և այն հանգամանքից, որ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը հստակ պատասխան չի

տալիս, թե նման դեպքերում ինչ գործառույթ է վերապահված դրամաշնորհի հատկացման մրցույթ հայտարարած պետական մարմնին՝

Հանձնաժողովը քվեարկության արդյունքում որոշեց.

1. Հանձնարարել ՀՀ ԿԳՄՍՆ երիտասարդության հարցերի վարչությանը նիստի անցկացման հաջորդ աշխատանքային օրը գրությամբ դիմելու ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մինչև **2024 թվականի փետրվարի 12-ը** տրամադրելու պարզաբանում **ԵՔ-ԴՄ-ԱԱ 02/24** ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի հետագա ընթացակարգի վերաբերյալ:

2. Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային նամակ ուղարկելու հայտատու կազմակերպությունների պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ տեղեկացնելով, որ առաջացել է տեխնիկական խնդիր հայտերիի փաթեթների ներբեռնման և դիտման, ըստ այդմ՝ գնահատման հետ կապված, և դրամաշնորհային մրցույթի հետագա գործընթացը կկազմակերպվի՝ խնդրի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումից հետո:

3. Հաջորդ նիստը գումարել **ԵՔ-ԴՄ-ԱԱ 02/24** ծածկագրով դրամաշնորհի հատկացման մրցույթի ընթացքում ծագած խնդրի շուրջ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանում ստանալու հաջորդ աշխատանքային օրը:

4. Հաշվի առնելով օրակարգի 1-ին կետը և ընդունած որոշումները՝ օրակարգային 2-րդ հարցը հանել օրակարգից:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Զարա Ասլանյան

Վերոնիկա Խորասանյան

Անուշ Մխիթարյան

Նարեկ Առաքելյան

Մարիանա Մինասյան